ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2011 թվականի N 13-Ա

Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ՀՐԱԶԴԱՆԻ Հ.ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 12 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻՑ ԳՈՒՄԱՐ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի <ա> ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 7/29-3-3254 միջնորդագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանին՝ <Հրազդանի Հ.Պարոնյանի անվան թիվ 12 մջնակարգ դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպության 2011 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 1364800(մեկ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր) դրամ:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ.Հունանյանին.

վերահսկել սույն որոշման պահանջների կատարման ընթացքը և ներկայացնել տեղեկատվություն:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԿՈՇԱՀԳԱԼԴՅԱՆ